Սերգեյ Դովլաթով

Կոմպրոմիսներ

Կոմպրոմիս տասներորդ

(«Վեչեռնի Տալլինն»: Հուլիս 1976թ .)

«ՆՐԱՆՔ ԽԱՆԳԱՐՈՒՄ ԵՆ ԱՊՐԵԼ: Այսօր առավոտյան թիվ 4 բժշկական սթափարան է բերվել քաղաքացի Է . Լ . Բուշը, որը փորձել է ներկայանալ որպես հանրապետական մամուլի աշխատակից: Է . Լ . Բուշը չի հնազանդվել սթափարանի աշխատակիցներին, ինչը դրսեւորել է վերջիններիս կծելով: Այդ մասին որոշվել է տեղեկացնեւ նրա աշխատավայրում, որը, սակայն, թեկուզ մոտավոր կերպով առայժմ չի հաջողվում պարզել»:

Ինչպես միշտ խմիչքը պակասեց, եւ ինչպես միշտ, ես դա կանխատեսել էի: Ուտելիքի հարցում խնդիրներ չառաջացան: Չէին էլ կարող առաջանալ: Ի՞նչ խնդիրներ կարող են լինել, եթե Սեւաստյանովը սովորական խնձորը բաժանում էր 64 մասի…

Երկու անգամ, հիշում եմ, գնացինք «Ստրելեցկայա» օղի բերելու: Հետո ինչ-որ աղջիկներ հայտնվեցին սառցաբալետից: Շաբլինսկին անընդհատ նայում էր աղջիկներին ու կրկնում .

Մենք կհալեցնենք այդ սառույցը… Մենք կհալեցնենք այդ սառույցը…

Ի վերջո օղու գնալու իմ հերթն էլ հասավ: Գնացինք Շաբլինսկու հետ միասին: Երբ վերադարձանք, աղջիկներն արդեն չկային:

Շաբլինսկին ասաց .

Լրբերն ավելի խելոք էին, քան կարծում էի: Կերան, խմեցին ու թռան:

Ավելի լավ, ասաց Սեւաստյանովը, ես հիմա կարտոֆիլ կեփեմ:

Լավ է շիլա չես առաջարկում, վրդովվեց Շաբլինսկին:

Խմեցինք ու սկսեցինք ծխել: Ալկոհոլն անարդյունավետ էր ազդում: Կարգին հարբելն էլ, ախր, արվեստ է…

Նման դեպքերում աղջիկներին զանգելն անօգուտ է: Եթե լակելը չի ստացվում, ուրեմն՝ վերջ: Ուրեմն՝ քեզ համատարած ստորացնելու են: Հարկավոր է միջավայրը փոխել: Գլխավորը միջավայրն է:

Թոֆիկ Ալիեւը, հիշում եմ, պատմում էր .

Տանը դաշնամուր, շքեղ ննջասենյակ ու արծաթե գդալներ ունեի… Համարյա Վերածննդի դարաշրջանի նկարներ: Եվ ոչ մի սեքս: Ավտոտնակում միայն հնոտիք էր ու գիբիլ… հին ավտոդողեր, բրեզենտե ծածկոց… Այդ ծածկոցի վրա պառկել է պարարվեստի ուսումնարանի կեսը: Շատերը պարզապես աղաչում էին՝ գնանք ավտոտնակ: Այնտեղ, իբր, միջավայրը համապատասխան է…

Շաբլինսկին ելավ տեղից եւ ասաց .

Գնա՞նք Տալլին:

Գնանք:

Ինձ համար միեւնույն էր: Առավել եւս՝ որ աղջիկներն անհետացել էին:

Շաբլինսկին աշխատում էի «Սովետսկայա Էստոնիա» թերթում: Լենինգրադում էր արդեն մեկ շաբաթ: Տալլին գնացող մեքենա կար:

Սեւաստյանովը կեսբերան առաջարկեց չցրվել: Մենք հրաժեշտ տվրնք ու դուրս եկանք: Մտանք խանութ: Շշերն ուռեցրին մեր գրպանները: Ես ամառային

վերնաշապիկով ու սպորտային կոշիկներով էի: Անձնագիրս անգամ մոտս չէր:

Տասը րոպեից մի «Վոլգա» մոտեցավ: Ղեկին մոայլ մի մարդ էր, որին Շաբլինսկին կոչում էր Գրիշանյա:

Գրիշանյան ամբողջ ճանապարհին լուռ էր: Օդի չխմեց: Ինձ նույնիսկ թվաց, թե Շաբլինսկին նրան առաջին անգամ է տեսնում:

Արագորեն անցանք Լենինգրադի հյուսիսարեւմտյան անշուք ծայրամասը: Դրանից հետո միանման գյուղեր էին, գունաթափ խոտ ու դանդաղահոս գետակներ: Երկաթուղային անցման մոտ Գրիշանյան կանգնեցրեց ավտոմեքենան, դուրս եկավ եւ ուղղվեց դեպի թփերը: Որպես պայմանականություններից ազատ մարդ, քայլելիս արդեն արձակում էր տաբատի կոճակները:

Ինչո՞ւ է այսքան մռայլ, հարցնում եմ: Շաբլինսկին պատասխանեց .

Մռայլ չէ: Քննության տակ է: Եթե չեմ սխալվում՝ կաշառքի համար:

Ի՞նքն է կաշառք տվել:

Գրիշային մի սրբացրու: Գրիշան չի տվել, վերցրել է: Ըստ որում՝ անսահման քանակությամբ: Ու հիմա էլ քննության տակ է: Արդեն քաղաքից չբացակայելու ստորագրություն են վերցրել:

Ինչպե՞ս է, որ դուրս է եկել:

Որտեղի՞ց:

Լենինգրադից:

Ստորագրությունը Տալլինում է տվել:

Իսկ ինչպե՞ս է Տալլինից դուրս եկել:

Շատ պարզ: Նստել է մեքենան ու քշել: Գրիշան կորցնելու ոչինչ չունի այլեւս: Նրան շուտով ձերբակալելու են:

Ե՞րբ, անիմաստ հարց տվի ես:

Մինչեւ Տալլին հասնելը՝ հազիվ թե…

Գրիշանյան դուրս եկավ թփերից: Քայլելիս կոճկում էր տաբատը: Նրա ամուր դաստակներին ինչ-որ փայլ նկատեցի: «Ձեռնաշղթանե՞ր», մտածեցի: Հետո տեսա, որ մետաղե շղթաներով ժամացույցներ են՝ երկուական ամեն դաստակին:

Շարունակեցինք ճանապարհը:

Նարվան անցնելուց հետո բնապատկերը փոխվեց: Բնությունն արդեն պակաս անկանոն էր: Տները՝ ավելի կոկիկ ու խիստ:

Շաբլինսկին ննջում էր: Իսկ ես անդադար մտածում էի՝ ինչո՞ւ: Ո՞ւր եւ ինչո՞ւ եմ գնում: Ի՞նչ է ինձ սպասում: Ի՛նչ հիմար ձեւով է անցնում կյանքս…

Վերջապես մոտեցանք Տալլինին: Անցանք անդեմ աղյուսե ծայրամասերը: Գոթական ինչ-որ տարրեր: Եվ ահա Ռատուշայի հրապարակում ենք:

Նստատեղի տակ դատարկ շիշը ինչ-որ մետաղի դիպավ: Մեքենան կանգ առավ: Շաբլինսկին արթնացավ:

Ահա եւ տանն ենք, ասաց:

Դուրս եկա մեքենայից: Թաց փողոցն արտացոլում էր նեոնե տառերը: Մթության մեջ գծագրվում էին շենքերի հարթ դիմապատերը: Բնապատկերը հիշեցնում էր Անդերսենի գրքերի նկարազարդումները:

Շաբլինսկին ձեռքը մեկնեց ինձ .

Զանգիր:

Ես չհասկացա: Հետո նա ասաց .

Նելկան անհանգստանում է:

Այստեղ արդեն ես իսկապես անհանգստացա: Նույնիսկ շփոթված հարցրի .

Ի՞նչ Նելկա:

Կինս, ասաց Շաբլինսկին, մոռացե՞լ ես: Հարսանիքին առաջին հարբողը դու էիր…

Շաբլինսկին արդեն վաղուց աշխատում էր կուսակցական թերթում: Ֆունկցիոների կարգավիճակից չէր նեղվում: Նույնիսկ ինչ-որ հմայք էր կարողացել պահպանել:

Առհասարակ նկատել եմ, որ մարդկային հմայքը խիստ դժվար է կորցնել: Շատ ավելի դժվար, քան բանականությունը, սկզբունքները կամ համոզմունքները: Երբեմն կուսակցական աշխատանքի տասնամյակներն էլ չեն օգնում: Պատիվը, ասենք, իսպառ վերանում է, իսկ հմայքը մնում է: Մորդովիայում կար նույնիսկ հմայքը պահպանած մի բանտապետ…

Կարճ ասած՝ Շաբլինսկին նորմալ մարդ էր: Եթե անգամ ստորություն էր անում՝ առանց ավելորդ ջանադրության: Մենք գրեթե ընկերներ էինք: Իսկ հիմա .

Զանգիր, կրկնեց:

Տալլինում առաջ էլ եղել էի: Դրանք, սակայն, ծառայողական գործուղումներ էին: Այն է՝ համապատասխան փաստաթղթերով, փողով ու հյուրանոցով: Իսկ գլխավորը՝ գոեհիկ, բայց խելամիտ նպատակի զգացողությամբ:

Իսկ հիմա ինչո՞ւ եմ եկել: Խմբագրությունից ինձ վռնդել էին: Գրպանումս տասնվեց ռուբլի է: Միակ ծանոթս շտապում է կնոջ մոտ: Նույնիսկ Գրիշանյան ձերբակալության նախօրեին է:

Շաբլինսկին մտածեց ու ասաց .

Լսիր, գնա Բուշի մոտ: Ասա, որ ես եմ ուղարկել: Բուշը լավ կընդունի քեզ:

Ո՞վ է Բուշը:

Բուշը ֆանտաստիկ երեւույթ է: Ինքդ կտեսնես: Կարծում եմ, կհավանես նրան: Հեռախոսը՝ չորս, զրոզրոն, տասնմեկ:

Միմյանց հրաժեշտ տվինք: Գրիշանյան նստած էր մեքենայում: Շաբլինսկին հապճեպ ձեռքով արեց նրան ու հեռացավ: Հենց այդպես, լքեց ինձ անծանոթ քաղաքում: Զարմանալին այն է, որ մեկ շաբաթ անց աշխատելու ենք նույն թերթում եւ անգամ ընկերություն ենք անելու:

Այդ պահին դանդաղորեն իջավ լուսամատի ապակին, ու Գրիշանյան ասաց .

Գուցե փողի կարի՞ք ունես:

Շնորհակալ են: Փող ունեմ:

Առաջին անգամ նայեցի Գրիշանյայի դեմքին: Նա նման էր ջրասուզակ շան՝ նույնպիսի մենության ու անհաղորդության արտահայտությամբ:

Ուզեցի նրան հաճելի ինչոր բան ասել: Ինձ ապշեցրել էր նրա վեհանձնությունը: Պարտքով փող առաջարկել ձերբակալությունից առաջ, ի՞նչը կարող է ավելի ասպետաբար արտահայտել ճակատագրին չհնազանդվելը…

Հաջողություն քեզ, ասացի:

Չառ, ասաց:

Աշխատանքից ինձ հեռացրել էին հոկտեմբերի սկզբին: Կոնկրետ պատճառ չկար: Ինձ հեռացրել էին, ինչպես ասում են, «ըստ պատճառների միագումարի»: Հավանաբար չափից ավելին էի ինձ թույլ տալիս:

Լրագրության մեջ յուրաքանչյուրին թույլատրվում է միայն մեկ բան: Միայն մեկ տեղում է թույլատրվում խախտել սոցիալիստական բարոյականության սկզբունքները: Այսինքն՝ մեկին թույլատրվում է խմել: Մյուսին՝ խուլիգանություն անել: Երրորդին՝ քաղաքական անեկդոտներ պատմել: Չորրորդին՝ հրեա լինել:

Հինգերորդին՝ անկուսակցական: Վեցերորդին՝ անբարո կյանքով ապրել: Եվ այլն: Յուրաքանչյուրին, սակայն, կրկնում եմ, թույլատրվում է միայն մեկ բան: Չի կարելի միաժամանակ հրեա լինել ու հարբեցող: Խուլիգան եւ անկուսակցական…

Ես, մինչդեռ, կործանարար կերպով համակողմանի էի: Այն է՝ ինձ թույլ էի տալիս ամեն ինչից՝ որոշ չափով:

Ես խմում էի, սկանդալներ էի սարքում, ցուցաբերում էի գաղափարական կարճատեսություն: Հավելումն՝ կուսակցության անդամ չէի եւ նույնիսկ մասամբ հրեա էի: Վերջապես, ընտանեկան կյանքս ավելի ու ավելի էր խճճվում:

Եվ ինձ վռնդեցին: Կանչեցին կուսկոմիտեի նիստին ու ասացին .

Բավական է: Մի մոռացեք, որ լրագրությունը գաղափարախոսական ճակատի առաջավոր գիծն է: Դարձեք իսկական բանվորական թղթակից: Ձեր թղթակցություններում արտացոլեք ճշմարիտ կյանքը…

Այստեղ չդիմացա:

Ճշմարիտ կյանքի համար, ասում եմ, դուք ինձ առանց դատաստանի կգնդակահարեք:

Նիստի մասնակիցները վրդովված իրար նայեցին: Ինձ ազատեցին «սեփական դիմումի համաձայն»:

Դրանից հետո չէի աշխատում: Խմբագրում էի ինչ-որ գեներալի հուշերը: Խալտուրա էի անում ռադիոյում: Գրեցի «Կոմունիստները նվաճեցին տունդրան» բրոշյուրը: Անգամ այստեղ, սակայն, կոպիտ քաղաքական սխալ թույլ տվի: Բրոշյուրում խոսքը Մոնչեգորսկի շինարարության մասին էր: Իրադարձությունները ծավալվում էրն 30-ական թվականներին: Պատասխանատու աշխատողների մեջ կային բազմաթիվ հրեաներ: Հիշում եմ ինչ-որ Շիմկուսի, Ֆելդմանի, Ռապոպորտի… Քաղկոմում կարդացին ու ասացին .

Այս ի՞նչ սիոնիստական թերթիկ է: Այս ի՞նչ առասպելական հրեաներ են տունդրայում: Անմիջապես ոչնչացնել ամբողջ տպաքանակը…

Հոնորարը, սակայն, հասցրել էի ստանալ: Գրել եմ նաեւ ներքին զրախոսություններ ամսագրերի համար: Անանուն կերպով համագործակցում էի հեռուստատեսությունում: Կարճ ասած՝ վերածվել էի ազատ արվեստագետի: Ի վերջո, հայտնվեցի Տալլինում…

Հուշանվերների խանութի մոտ հեռախոսի խցիկ տեսա: Վերհիշեցի թվերը՝ չորս-զրո-զրո-տասնմեկ:

Զանգում եմ: Պատասխանում է կանացի ձայն .

Լսում եմ, սիրելիս: Նրա խոսքում ստացվեց «սիղելիս»: -

Լսում եմ:

Հեռախոսի մոտ խնդրեցի կանչել Էրիկ Բուշին: Ի պատասխան հնչեց .

Տանը չէ: Ես աղդեն անհանգստանում եմ: Խոստացել էղ չուշանալ: Այնպես ող, եկեք: Կզղուցենք, մինչեւ գա:

Կինը տանելի կերպով կարողացավ թելադրել հասցեն: Բացատրեց, ինչպես տեղ հասնել:

Պստլիկ էստոնական տրամվայը ճռճվում էր շրջադարձերին: Քսան րոպե անց Կադրիորգում էի: Հեշտությամբ գտա կիսաքանդ գերանաշար տնակը:

Դուռը բացեց հիսունին մոտ մի կին՝ նիհար, բաց-կապտավուն մազերով: Նրա ալ գիշերազգեստի ժանյակները հասնում էին ոսկեգույն արաբական կոշիկներին: Դիմափոշու խիտ շերտը ծածկում էր դեմքը: Այտերը վառվում էին քիմիական կարմրությամբ: Նա նման էր հետամնաց գավառական օպերետի հերոսուհու:

Էդիկը տանն է, ասաց, նեղս անցեք:

Նեղ նախասրահում դժվարությամբ էինք տեղավորվում երկուսով: Մտա սենյակ ու ապշեցի: Այսպիսի հրեշավոր թափթփվածություն դեռ չէի տեսել:

Ճաշասեղանի վրա կիտված էր կեղտոտ ամանեղենը: Կանաչավուն պաստառների պատռված կտորները կախվել-հասնում էին հատակին: Հնամաշ գորգը ծածկված էր լրագրերի հաստ շերտով: Անկյունից անկյուն էր թռչում սիամի կատուն: Դռան մոտ շարված էին դատարկ շշերը:

Փոս ընկած բազմոցից բարձրացավ երեսնամյա մի տղամարդ: Նա ամերիկյան կինոհերոսի արեւահար ու առնական դեմք ուներ: Բարձրորակ արտասահմանյան բաճկոնի դարձօձիքը զարդարված էր մեխակով: Կիսակոշիկները փայլում էին: Կիսաքանդ բնակարանում Էրիկ Բուշը կարծես տիեզերական եկվոր լիներ:

Բարեւեցինք միմյանց: Կցկտուր բացատրեցի, թե ինչու եմ եկել:

Բուշը ժպտաց եւ անսպասելիորեն խոսեց կոկ ու երգեցիկ ոտանավորներով .

Ներս եկ, հյուր կեսգիշերային: Խորդանոցը քեզ է սպասում: Սրճեփը կրակին է: Պահարանում է պանիրը հոլանդական: Ինձ եղբայր կլինես: Իսկ Գալինային՝ ընկեր: Սիրի՛ր նրան մոր պես: Սիրի՛ր նրան որդու պես: Շուրջը խոզանոց է…

Քաղցր կաղկանդակ ունենք, խառնվեց Գալինան: Բուշը նրան ընդհատեց մեղմ, բայց վեհ շարժումով .

Շուրջը խոզանոց է, դրանից վատն էլ, սակայն, կա: Պատուհանից փչում է, ու կեղտոտ է մեր արտաքնոցը… Փոխարենն այստեղ չկա, եւ փաստ է դա, իշխանություն խորհրդային: Ազատությանն է իմ կարգախոսը, իմ ֆետիշն ու կուռքը իմ:

Այնպես էի ինձ պահում, թե այդպես էլ պետք է լինի: Իսկ ի՞նչ անեի: Թողնեի-գնայի՞ գիշերվա մեկին: «Շտապ օգնությո՞ւն» դիմեի:

Եվ հետո, մարդկային խելագարությունը դեռ ամենասոսկալին չէ: Տարիների ընթացքում այն ինձ համար ավելի ու ավելի է մոտենում նորմային: Իսկ նորման

անբնական երանգներ է ձեռք բերում:

Նորմալ մարդն ինձ լքեց՝ թողնելով բոլորովին մենակ: Աննորմալն, ահա, առաջարկում է սուրճ, իր բարեկամությունն ու խորդանոցը…

Կենտրոնացա ու արտասանեցի .

Պատիվ է մեծ հյուրընկալվելը ձեզ: Եվ ի սրտե երախտապարտ եմ ես: Մանավանդ որ մյուսները վաղուց, թքում են վրաս անթաքույց…

Հետո սուրճ խմեցինք, ջեմով կարկանդակ կերանք: Կատուն թռավ գլխիս: Գալինան Օֆֆենբախի ձայնասկավառակ միացրեց:

Բաժանվեցինք գիշերվա երկուսին:

Բուշի ու Գալինայի մոտ ապրեցի երեք շաբաթ: Օր-օրի ավելի էին դար գալիս ինձ: Թեեւ երկուսն էլ անվերադարձ շիզոֆրենիկներ էին:

Էրիկ Բուշը հարգարժան ընտանիքի զավակ էր: Նրա հայրը մաթեմատիկայի պրոֆեսոր էր Ռիգայում: Մայրը բաժանմունքի վարիչ էր գործվածքեղենի հանրապետական ինստիտուտում: Յոթ տարեկանում Էրիկն արդեն ատում էր երկուսին էլ: Ինչ-որ հրաշքով նա ի ծնե հակասովետական էր ա նոնկոնֆորմիստ: Ծնողներին անվանում էր «առաջքաշվածներ»:

Դպրոցն ավարտելուն պես Բուշը լքում է Ռիգան: Մեկ տարուց ավելի լողում է ձկնորսանավով: Հետո աշխատում է որպես լողափի լուսանկարիչ: Ընդունվում է Լենինգրադի կուլտուրայի ինստիտուտի հեռակա բաժինը: Ավարտելուց հետո դառնում է լրագրող:

Նրա աշխարհայացքով մարդու համար նման գործունեությունը, թվում է թե, հակացուցված պիտի լիներ: Բուշը, ախր, ոչ թե սոսկ քննադատում էր գոյություն ունեցող կարգերը: Բուշը հերքում էր բուն պատմական իրականությունը: Մասնավորապես՝ հաղթանակը գերմանական ֆաշիզմի նկատմամբ:

Նա պնդում էր, որ անվճար բուժսպասարկում գոյություն չունի: Հնչեցնում էր կասկածներ տիեզերքում մեր առաջնության վերաբերյալ: Երրորդ բաժակից հետո Բուշը գոռում էր .

Գագարինը տիեզերք չի՛ թռել: Տիտովն էլ չի թռել… Եվ բոլոր խորհրդային հրթիռները կավով լցված պահածոյի տուփեր են…

Այսպիսի մարդը պիտի որ տեղ չունենար խորհրդային լրագրության մեջ: Բուշը, այդուհանդերձ, ընտրել էր հենց այդ զբաղմունքը: Նրա վճռական նոնկոնֆորմիզմը ուղեկցվում էր բացարձակ անսկզբունքայնությամբ: Նրա թղթակցություններից մեկն սկսվում էր այսպես .

«Հասավ նաեւ խոշոր եղջերավոր անասունների աստեղային ժամը: Իրենց աշխատանքն սկսեցին անասնաբույժների համագումարի մասնակիցները: Կաթի ու թրիքի հոտ տարածող հոետորները հաջորդում են մեկը մյուսին…»:

Սկզբում Բուշն աշխատում էր շրջանային թեթում: Սակայն շուտով գավառական կյանքը ձանձրացրեց նրան: Հյուսիսային փոքր քաղաքի համար նա չափազանց մեծ անհատականության էր:

Երկու տարի առաջ Բուշը տեղափոխվել էր Տալլին: Բնակություն էր հաստատել մի տարեց կնոջ մոտ:

Բուշն ուներ այն, ինչը ճակատագրականորեն էր ազդում ծերացող կանանց վրա: Այն է աղքատություն, գեղեցկություն, սարկաստիկ հումոր, իսկ ամենակարեւորը՝ բնավորության իսպառ բացակայություն:

Չորս տարվա ընթացքում Բուշը գայթակղել էր չորս ծերացող կնոջ: Գալինա Արկադիեւնան հինգերորդն էր ու ամենասիրելին: Մնացած չորսը շարունակում էին Բուշին վերաբերվել երախտագիտությամբ ու հիացմունքով:

Չար լեզուները Բուշին ալֆոնս էին անվանում: Այդպես չէր: Սիրելով ծերացող կանանց, նա ղեկավարվում էր այլասիրական բնույթի դրդապատճառներով: Բուշը բարեհոգաբար նրանց թույլ էր տալիս իր վրա հեղել ուշացած դառը զգացմունքների ջրվեժները:

Աստիճանաբար Բուշի մասին լեգենդներ հյուսվեցին: Նա անընդհատ պատմությունների մեջ էր ընկնում:

Մի անգամ ուշ գիշերով Բուշն անցնելիս է լինում Կադրիորգով: Մոտենում են երեք հոգի: Մեկը մռայլորեն ասում է .

Ծխելիք տուր:

Ինչպե՞ս է նման իրավիճակում վարվում նորմալ մարդը: Համեմատաբար խելամիտ վարքագծի երեք տարբերակ կա:

Անխռով ու անվախ խուլիգանին մեկնել ծխախոտատուփը:

Արագորեն անցնել-գնալ, ավելի լավ է՝ վազելով:

Եվ վերջինը՝ հարվածելով ամենամոտ կանգնածին, շտապ նահանջել:

Բուշն ընտրում է ամենակործանիչ, ամենաանսովոր տարբերակը: Ի պատասխան այդ կոպիտ պահանջի, Բուշն ընդգծված բարեկրթությամբ ասում է .

Ինչ ասել է՝ տուր: Իրար հետ ե՞րբ ենք բրուդերշաֆտ խմել: Ավելի լավ կաներ հանգերով խոսեր:

Նրան կարող էին վտանգավոր գժի տեղ դնել: Իսկ այսպես՝ մի լավ ծեծում են: Խուլիգաններին, հավանաբար, հունից հանել էր «բրուդերշաֆտ» խորհրդավոր բառը:

Գիտակցությունը կորցնելով, Բուշը շշնջացել էր .

Ցնծացե՛ք, տականքներ: Մարմնական գոեհիկ ցնծություն եմ նշմարում ձեր դեմքերին…

Մի շաբաթ պառկեց հիվանդանոցում: Կողոսկրների կոտրվածքով ու դուրս ընկած մատով: Ճակատին հայտնվել էր ռոմանտիկ սպի…

Բուշն աշխատում էր «Սովետսկայա Էստոնիա» թերթում: Տարիուկես արտահաստիքային թղթակից էր: Խոսում էին նրան մշտական հաստիք տալու մասին: Գլխավոր խմբագիրը ժպիտով նրա կողմն էր նայում: Աշխատակիցները նրան լավ էին վերաբերվում: Հատկապես՝ ծերացող կանայք: Տեսնելով Բուշին, նրանք իրար ականջի շշնջում ու շիկնում էին:

Հաստիքային աշխատանքը շատ բան էր նշանակում: Առավել եւս՝ հանրապետական թերթում: Նախ՝ կայուն աշխատավարձ: Բացի դրանից՝ բազմաթիվ ու բազմազան սոցիալական արտոնություններ: Վերջապես՝ անձնական անպատժելիության որոշակի աստիճան:

Բուշն անհամբերությամբ սպասում էր հաստիքային նշանակմանը: Նա, կրկնում եմ, երկյակ անձնավորություն էր: Ըմբոստությունը նրանում համերաշխորեն գոյակցում էր սկզբունքների բացակայության հետ: Բուշն ասում էր .

Ռեժիմը տապալելու համար պիտի դառնամ դրա հենասյուներից մեկը: Այդ ժամանակ շատ շուտով ողջ կառույցը կսասանվի…

Մոտենում է նոյեմբերի 7-ը: Խմբագիրը կանչում է Բուշին ու ասում .

Որոշել ենք, Էռնեստ Լեոպոլդովիչ, պատասխանատու հանձնարարություն տալ ձեզ: Քարտուղարությունից անցագիր եք ստանում: Գնում եք նավահանգիստ: Զրուցում եք արեւմտյան կապիտաններից մի քանիսի հետ: Ընտրում եք սոցիալիզմի գաղափարների նկատմամբ ամենալոյալին: Հարցեր եք տալիս նրան: Այնպես եք անում, որ քիչ թե շատ հարմար պատասխաններ է տալիս: Կարճ ասած՝ հարցազրույց եք անում: Ցանկալի է, որ նա շնորհավորի մեզ Հոկտեմբերյան հեղափոխության վաթսուներեքերորդ տարեդարձի առթիվ: Դա չի նշանակում, թե պիտի քաղաքական կոչեր հեգի: Բոլորովին: Զուսպ, հարգալից շնորհավորական խոսքը միանգամայն բավական է: Սա է պահանջվում: Պա՞րզ է:

Պարզ է, պատասխանում է Բուշը:

Ըստ որում, անպայման արեւմտյան նավաստի է պետք: Շվեդ, անգլիացի, նորվեգացի, կապիտալիստական համակարգի տիպիկ ներկայացուցիչ: Եվ՝ լոյալ խորհրդային իշխանության նկատմամբ:

Կգտնեմ, վստահեցնում է Բուշը, այդպիսի մարդիկ լինում են: Մի անգամ, հիշում եմ, Խաբարովսկում զրուցում էի շվեյցարական թագավորական նավատորմի մի նավաստու հետ: Մեր մարդն էր, անդադար Լենինից Էր մեջբերում:

Խմբագիրը բարձրացնում է հոնքերը, մտածում ու հանդիմանող տոնով արտաբերում .

Շվեյցարիայում, ընկեր Բուշ, ծով չկա, թագավոր չկա, ուստի չկա նաեւ թագավորական նավատորմ: Դուք, հավանաբար, շփոթում եք:

Ինչպես թե՞ ծով չկա, զարմանում է Բուշը: Իսկ ի՞նչ կա, ձեր կարծիքով:

Ցամաք, պատասխանում է խնբագիրը:

Ցամաք, հա՞, չի հանձնվում Բուշը: Հետաքրքիր է: Շատ հետաքրքիր է: Կարո՞ղ է լճեր էլ չկան՝ հանրահայտ շվեյցարական լճերը:

Լճեր կան, տխրությամբ համաձայնում է խմբագիրը, շվեյցարական թագավորական նավատորմ, այդուհանդերձ, չկա… Սկսեք աշխատել, ավարտում է խմբագիրը, բայց, խնդրում եմ, ավելի լուրջ եղեք: Մենք, ինչպես հայտնի է, մտածում ենք ձեզ հաստիքային աշխատանք տրամադրելու մասին: Այս հանձնարարությունից շատ բան է կախված: Հաջողություն եմ մաղթում…

Տալլինի նավահանգիստը քաղաքի կենտրոնից հեռու չէ՝ քսան րոպե մեքենայով:

Բուշը գնում է տաքսիով: Մտնում է նավահանգստի բազմատիրաժ թերթի խմբագրություն: Իսկ այնտեղ լուսանկարիչ Լյովա Բարանովի քառասնամյակն են նշելիս լինում: Բուշին մեկնում են լիկյորով լի բաժակը: Հաճույքով ցմրուր խմում է ու ասում .

Ինձ չի կարելի: Աշխատանքի մեջ եմ:

Մի քիչ էլ խմում է ու զանգում դիսպետչերին: Դիսպետչերն առաջարկում է մոտենալ արեւմտագերմանական «Էդելվեյս» առեւտրական նավին:

Բուշը մի բաժակ էլ խմելուց հետո ուղղվում է դեպի չորրորդ նավամատույցը:

Կապիտանը Բուշին դիմավորում է նավասանդուղքի վրա: Տիպիկ ծովագայլ՝ ձիգ, թխամաշկ, արծվաքիթ կիսադեմով: Անունը՝ Պաուլ Ռուդի:

Դիսպետչերը նախազգուշացրել էր նրան խորհրդային լրագրողի այցի մասին: Բուշին հրավիրում է իր նավախցիկը:

Սկսում են զրուցել: Կապիտանը բավական ընկալելի ռուսերեն է խոսում: Կոնյակներից գերադասում է ֆրանսիականը:

«Կորդոն բլո» է, ասում է, խորհուրդ եմ տալիս փորձել: Շիշն արժե երկու հարյուր մարկ:

Հասկանալով, որ հարբելու է, Բուշը հասցնում է հարցնել .

Ե՞րբ ես մեկնում:

Վաղը տասնմեկն անց կեսին:

Գործից այլեւս կարելի էր չխոսել: Մեկնելու նախօրեին կապիտանն ինչ ուզես կարող էր ասած լինել: Ստուգո՞ղն ով է: Զրույցը պարզ է լինում ու անկեղծ:

Կանանց սիրո՞ւմ ես, հարցնում է կապիտանը:

Սիրում եմ, պատասխանում է Բուշը, իսկ դո՞ւ:

Էն էլ ոնց: Իմ Լուիզան, սակայն, չի էլ կասկածում: Սիրում եմ կանանց, խմիչք ու փող: Փող սիրո՞ւմ ես:

Մոռացել եմ դրա տեսքը: Գույնզգույն թղթերի հե՞տ ես:

Կամ մետաղե կլորակների:

Ֆուտբոլից ավելի եմ սիրում: Նույնիսկ կանանցից ավելի: Բայց զուտ պլատոնական սիրով…

Բուշը խմում է, կապիտանն էլ ետ չի մնում: Նավախցում թեւածում է ամերիկյան ծխախոտի բուրմունքը: Անտեսանելի ռադիոկետից լսվում է հավայական երաժշտություն: Ջրույցն ավելի ու ավելի է անկեղծանում:

Եթե իմանայիր, ասում է լրագրողը, թե ոնց եմ զզվել: Այս նզովյալ երկրից փախչել է պետք:

Հասկանում եմ, համաձայնում է կապիտանը:

Դու չես կարող դա հասկանալ: Քեզ համար, Պաուլ, ազատությունն օդի պես է: Դու այն չես նկատում: Դու պարզապես շնչում ես: Ինձ կարող է հասկանալ միայն ծովից ափն ընկած ձուկը:

Հասկանում եմ, ասում է կապիտանը, ելք կա: Չէ՞ որ գերմանացի ես: Կարող ես արտագաղթել ազատ Գերմանիա:

Տեսականորեն դա հնարավոր է: Գործնականում՝ բացառվում է: Հայրս, այո, ռուսացած կուրլյանդական գերմանացի է: Մայրս Լեհաստանից է: Երկուսն էլ կուսակցության մեջ են 36 թվականից: Երկուսն էլ առաջքաշվածներ են, ռեժիմի ծառաներ: Նրանք համապատասխան թղթերը չեն ստորագրի:

Ես հասկանում եմ, պնդում է կապիտանը, ուրիշ ելք կա: Գնա առեւտրական նավատորմ, դարձիր նավաստի: Այնքան դիմիր, մինչեւ վիզա տան: Եվ, հայտնվելով արեւմտյան նավահանգստում՝ փախիր: Ապաստան խնդրիր:

Դա էլ ֆիկցիա է: Ես վատ համբավ ունեմ: Ինձ վիզա չեն տա: Ես արդեն փորձել եմ… Ավաղ, դատապարտված եմ դանդաղ մահվան:

Հասկանում եմ… Կարելի է թաքնվել «Էդելվեյսի» վրա: Բայց դա վտանգավոր է: Եթե բռնեն, կդատեն որպես դավաճանի…

Կապիտանը շատ առողջ է դատում: Չափազանց առողջ: Արտասահմանցու համար, առհասարակ, բացառիկ իրազեկ է լինում: Սթափ մարդու մեջ դա կասկած կառաջացներ: Բայց Բուշն արդեն լրիվ հարբել է: Բուշը հռետորաբանում է .

Նա չէ ազատ, ով պայքարում է ընդդեմ ռեժիմի: Եվ ոչ էլ նա, ով հաղթահարում է վախը: Այլ նա, ով վախ չունի: Ազատությունը, Պաուլ, օրգանիզմի ֆունկցիա է: Դու չես հասկանա: Դու թռչունի պես ազատ ես ծնվել:

Ես հասկանում եմ, պատասխանում է կապիտանը…

Կեսգիշերին մոտ Բուշը իջնում է նավասանդուղքով: Նա հաճախ դանդաղեցնում է քայլերը, բռունցքը վեր է պարզում՝ «ռոտ ֆրո՛նտ»: Կամ ցուցամատն ու միջնամատն է բացում՝ «վի՛քթրրի»: Հաղթանա՛կ…

Կապիտանը հասկացող հայացքով ուղեկցում է նրան:

Հաջորդ օրը Բուշը գալիս է խմբագրություն: Ոգեւորված, բայց՝ սթափ: Նրա սիգարետը հաճելի բուրմունք է տարածում: Գրպանից երեւում է «Փարկեր» գրիչի կափարիչը:

Հոդվածը տալիս է մեքենագրուհիներին: Վերնագիրը երկար է ու գեղեցիկ՝ «Կվերադառնամ, որպեսզի նորից վայելեմ գարեհացի համը»:

Սկսվում է այսպես .

«Կապիտան Պաուլ Ռուդիին գտա մեքենայական բաժանմունքում: «Էդելվեյս» առեւտրական նավը պատրաստվում է մեկնելու: Մաշված մեխանիզմները հավելյալ ստուգում են պահանջում:

Բոսսին հետաքրքրում է միայն եկամուտը, բողոքում է կապիտանը: Քսան անգամ առաջարկել եմ փոխել գլանները: Իսկ եթե բաց ծովում պայթե՞ն: Ինքը, պարզ է, զբոսանավով է ճամփորդում: Իսկ մենք տանջվում ենք, ինչպես սատանաները դժոխքում…»:

Վերջացնում է այսպես .

«Կապիտանը լաթով սրբեց կոշտուկածածկ ձեռքերը: Մորուքը փայլում էր մազութից: Կավե ծխամորճն էլ ավելի էր ծանրուսցնում քառակուսի ծնոտը: Աչքով արեց ինձ ու ասաց .

Հիշի՛ր երիտասարդ: Ազատությունն օդի պես է: Շնչում ես ու ես նկատում այն… Սովետական մարդիկ չեն հասկանա: Չէ՞ որ նրանք թռչունի պես ազատ են ծնվել: Ինձ կհասկանա միայն ծովից ափն ընկած ձուկը… Եվ ուրեմն ես կվերադառնամ: Կվերադառնամ, որպեսզի նորից վայելեմ գարեհացի համը: Ազատության, հավասարության ու եղբայրության արբեցուցիչ համը»…

Վատ չէ, ասում է խմբագիրը, աշխույժ է, համոզիչ: Միակ բանը, որ տարակուսանք է հարուցում… Նա իրո՞ք նման բաներ է ասել:

Իսկ ուրիշ ի՞նչ կարող էր ասել:

Դե, իհարկե, իհարկե, զիջում է խմբագիրը:

Հոդվածը տպագրվում է: Հաջորդ օրը Բուշին կանչում են խմբագրի մոտ: Առանձնասենյակում նստած է լինում հիսունին մոտ մի անծանոթ տղամարդ: Դեմքին՝ լիակատար անտարբերություն եւ, միաժամանակ, ծայր աստիճան զգոնություն:

Խմբագիրը, ասես, նրա ստվերի տակ քշված է լինում: Անծանոթը, մինչդեռ, անդեմությամբ հանդերձ, լայնորեն ու հիմնավորապես գրավում է ողջ տարածքը: Նա իրենով լցրել էր նոմենկլատուրային առանձնասենյակի ողջ ծավալը: Ավելի փոքր է երեւում անգամ Լենինի գիպսե կիսանդրին կարմիր պաստառապատ պատվանդանի վրա:

Տղամարդը նայում է Բուշին ու հազիվ լսելի ասում .

Պատմեք:

Բուշը գրգռված հարցնում է .

Ի՞նչ պատմեմ: Ո՞ւմ պատմեմ: Ընդհանրապես, կներեք, ո՞ւմ հետ պատիվ ունեմ:

Պատասխանը ընդհատ գծի պես կարճ է լինում .

– Հանդիպման մասին… Ի՛նձ… Սորոկին… Գնդապետ Սորոկին…

Կոչումն ասելով, գնդապետը լռում է ասես սպառելով ուժերը:

Ինչ-որ բան ստիպում է Բուշին հնազանդվել: Եվ նա սկսում է վերապատմել կապիտան Ռուդիի մասին հոդվածը:

Գնդապետն անուշադրությամբ է լսում: Ավելի ճիշտ՝ ննջելով: Ինչպես ծույլ ուսանողին հարց տված դասախոսը: Հարց, որի պատասխանն իրեն վաղուց հայտնի է:

Բուշը խոսում է՝ մնալով հոդվածում շարադրված փաստերի հունի մեջ: Ավարտում է պաթոսով .

Ո՞ւր ես, Պաուլ: Ո՞ւր է քշում քեզ հեռավոր ճամփորդությունների քամին: Որտե՞ղ ես, իմ արտասահմանցի ընկեր…

Բանտում, անսպասելիորեն պատասխանում է գնդապետը: Ձեռքի թերթով հարվածում է սեղանին, կարծես ճանճ է սպանում, ու հստակ արտասանում .

Պաուլ Ռուդին գտնվում է բանտում: Մենք նրան ձերբակալել ենք որպես հայրենիքի դավաճանի: Նրա իսկական ազգանունը Ռյատտի է: Այստեղից վսխած էստոնացի է: Յոթանասուն թվականին բայդարկայով փախել է Շվեդիա: Բնակություն է հաստատել Համբարգում: Ամուսնացել է Լուիզա Ռեյշվիցի հետ: Չորրորդ տարին է, ինչ լողում է արեւմտագերմանական առեւտրական նավատորմի նավերով: Վերջապես առաջին անգամ եկել էր Էստոնիա: Նրան վաղուց էինք սպասում…

Գնդապետը դիմում է խմբագրին:

Մենք պետք է առանձին խոսենք:

Խմբագիրն անհարմար է զգում, որ իրեն վոնդում են սեփական կաբինետից: Քթի տակ ասում է .

Այո, ինքս էլ պատրաստվում էի համարի նկարները նայել:

Ու դուրս է գալիս:

Գնդապետը դառնում է Բուշին .

Ի՞նչ կասեք:

Ցնցված եմ: Խոսք չունեմ:

Ինչպես ասում են՝ չստացվեց:

Բուշը, սակայն, պնդում է նախկին տարբերակի վրա .

Ես նկարագրեցի այն, ինչ եղել է: Կապիտան Ռուդիի անցյալի մասին պատկերացում անգամ չունեի: Նրան ընկալել եմ որպես առաջադեմ մտածողության տեր արտասահմանցու:

Լավ, ասում է գնդապետը, ենթադրենք: Ամեն դեպքում, ձեզ համար տհաճ դեպք է: Բիծ է ձեր լրագրողական կարիերայում: Ես կասեի անգամ՝ գաղափարական վրիպակ: Զգոնության թուլացում: Մի բան պետք է անել…

Ի՞նչ:

Այսպիսի գաղափար կա: Ուզո՞ւմ եք մեզ օգնել: Մենք էլ, համապատասխանաբար, կերաշխավորենք, որ ձեզ հաստիք տան:

ՊԱԿ-ո՞ւմ, հարցնում է Բուշը:

Ինչո՞ւ ՊԱԿ-ում: «Սովետսկայա Էստոնիա» թերթում: Չէ՞ որ դուք վաղուց եք երազում հաստիքային աշխատանքի մասին:

Մենք ի զորու ենք արագացնել այդ որոշումը: Ժամկետները մենք ենք որոշում:

Բուշը ձգվում է: Գնդապետ Սորոկինը շարունակում է .

Դուք կարող եք տալ մեզ հետաքրքրող ցուցմունքները:

Այսի՞նքն:

Կապիտան Ռուդիի վերաբերյալ… Ցուցմունք տվեք, որ նա փորձել է ձեզ… օգտագործել… այլասեռական նպատակներով:

Ի՞նչ, տեղից ելնում է Բուշը:

Հանգի՛ստ:

Դուք ինձ ինչի՞ տեղ եք դնում: Երբեք չէի կարծում, որ ՊԱԿ–ը դիմում է նման մեթոդների:

Գնդապետի աչքերի փայլը դառնում է սրիչի պես սառը եւ սուր: Նա կարմրում ու ուղղվում է տեղում .

Առանց վերամբարձ խոսքերի, խնդրում եմ: Խորհուրդ եմ տալիս մտածել: Դրանից է կախված ձեր ապագան:

Այստեղ Բուշն էլ ուղղում է մեջքը: Դանդաղորեն գրպանից հանում է ամերիկյան սիգարետների տուփը: Վառում է «Ռոնսոն» վառիչով: Ու հանգիստ ասում է .

Ձեր առաջարկությունն անբարոյական է: Այն հակադրվում է իմ բարոյական սկզբունքներին: Ինձ միայն այդ էր պակասում, որ դուր գայի համասեռականին: Մի խոսքով, ես հրաժարվում եմ: Այլասեռությունն ինձ համար չէ… Ուզում եք գրեմ, որ ինձ խմեցրել է… Ոչ, թերեւս դա էլ ազնիվ չի լինի…

Դե ինչ, ասում է գնդապետը, ինձ համար ամեն բան պարզ է: Կարծում եմ, դուք տանուլ կտաք:

Իսկ մի՞թե հնարավոր է ՊԱԿ-ին հաղթել, հռհռում է Բուշը:

Զրույցն այսքանով ավարտվում է: Գնդապետը գնում է: Արդեն շեմին անսպասելիորեն ասում է .

Ձեր մասին ավելի վատ կարծիք ունեի:

Գնդապետ, ձեր կերպարից դուրս մի եկեք, պատասխանում է Բուշը…

Նրան զրկում են արտահաստիքային աշխատանքից: Հնարավոր է, որ Սորոկինի արածն էր: Ավելի հավանական է, սակայն, որ խմբագիրն է եռանդ ցուցաբերել: Բուշը կրկին անցնում է ծերացող կանանց խնամքի տակ: Թեեւ մինչ այդ էլ գրեթե նույն վիճակում էր:

Հենց այդ օրերին նա ծանոթանում է Գալինայի հետ: Մինչ այդ նրան սիրում էր Մարիաննա Վիկենտեւնան՝ առեւտրի ոլորտում բարձրաստիճան մի պաշտոնատար: Նա Բուշի համար վերնաշապիկներ ու փողկապներ էր գնում: Բուշի փոխարեն վճարում էր ռեստորաններում: Բուշին կերակրում էր առողջ ու օգտակար սննդով: Գրպանի փող, սակայն, Բուշին չէր տալիս: Թե չէ սա անմիջապես սկսում էր սիրահետել ուրիշ կանանց:

Ստանալով հերթական հոնորարը խմբագրությունից, Բուշն անմիջապես անհետանում էր: Տուն էր գալիս գիշերով՝ տարածելով սոխի ու օծանելիքի բուրմունք: Մի օր Մարիաննան չի դիմանում ու ճչում է .

Որտե՞ղ էիր քարշ գալիս, սրիկա: Ինչո՞ւ ես գիշերվա կեսին տուն գալիս:

Բուշը մեղավոր պատասխանում է .

Առավոտյան կգայի, պարզապես փողս չհերիքեց:

Ի վերջո, Մարիաննան ընբոստանում է: Մեկնում է հանգստանալու վերադաս գերատեսչության մի տարեց աշխատակցի հետ: Վերջինիս կողքին ինքը երիտասարդ ու թեթեւամիտ էր երեւում: Բուշին բնակարանում միայնակ թողնել, բնականաբար, չի ուզում:

Այստեղ հայտնվում է Գալինա Արկադիեւնան: Հայտնվում է, փաստորեն, չեղած տեղից: Չի բացառվում, որ՝ նյութի պահպանման օրենքի համաձայն:

Բանն այն է, որ նա քաղաքացիական կարգավիճակ չուներ: Գալինան նշանավոր էստոնացի հեղափոխականի, չի բացառվում՝ հենց Կինգիսեպպի այրին էր: Եվ նրան ինչ-որ թոշակ էին նշանակել:

Նրա հետ Բուշը ծանոթացել էր ռոմանտիկ հանգամանքներում՝ լճակի ափին: Կադրիորգի հենց կենտրոնում մի փոքր, գողտրիկ լճակ կա: Շուրջը՝ լորենիներով երիզված լայն ծառուղիներ: Ձեռնասուն սայառերն անվախ մոտենում են զբոսնողներին:

Լճակում լողում են սեւ կարապներ: Ինչպես են այստեղ հայտնվել՝ հայտնի չէ: Բոլորին հայտնի է, փոխարենը, որ էստոնացիք սիրում են կենդանիներին: Ինչ-որ մեկը կարապների համար փայտե տնակ է կառուցել: Կադրիորգի այցելուները հացի կտորներով կերակրում են կարապներին…

Մայիսյան մի երեկո Բուշը նստած է լինում լճափի խոտին: Սիգարետները վերջացել են: Երկրորդ օրն է փող չունի: Գիշերն անցկացրել է «Սոյուզպեչատ»–ի լքված կրպակում: Իր բախտից հատակը ծածկված է եղել հին թերթերով:

Նստած ծամում է դառը խոտը: Գլխում մտքերը կցկտուր են ու տագնապած, ինչպես հեռագրերը .

«…Ուտելիք… Ծխելիք… Մնալու տեղ… Մարիաննան առողջարանում է… Աշխատանք չկա… Ծնողներին դիմելն ամոթ է, իսկ գլխավորը՝ անիմաստ»…

Ե՞րբ եւ որտե՞ղ է կերել վերջին անգամ: Հիշում է ինքնասպասարկումով խորտկարանի երկու կտոր հացը: Հետո՝ թթու խնձորներ ուրիշի ցանկապատի տակ: Ճանապարհին գտած վանիլային թխվածքաբլիթը: «Սոյուզպեչատ»–ի կրպակում հայտնաբերված կանաչ լոլիկը…

Կարապները ջրի վրայով սահում էին ինչպես երկու հսկայական ծաղկեփունջ: Սնունդը ստանում էին առանց տեսանելի ջանքերի: Կեռ վզիկները պսակող

փոքրիկ գլխիկները անընդհատ թեքվում էին դեպի ջուրը…

Բուշը մտածում է ուտելիքի մասին: Մտքերն ավելի ա ավելի կարճ են դառնում .

«…Կարապ… Թռչուն… Ուտելիք…»:

Այստեղ նախնիների կանչը Բուշի մեջ արձագանքում է աննշան նյարդային դողի տեսքով: Նրա աչքերում արտացոլվում են նախնադարյան խարույկների ցոլքերը: Նա սառում է, ինչպես քաղաքի գերությունից դուրս պրծած որսաշունը ճահճուտում…

Տասի կողմերը լրիվ կմթնի: Ինքնավստահ թռչունին բռնելը մի րոպե էլ չի քաշի: Փետրած կարապը կարող է միանգամայն սագի տեղ անցնել: Իսկ մի ամբողջ սագով Բուշն արդեն չի կորչի: Ամեն տեղ ցանկալի հյուր կդառնա…

Բուշը կերպարանափոխվում է: Հոգա խորքում հնչում է որսորդական փողը: Ֆիզիկապես զգամ է իր անթրաշ ծնոտի կարծրությանը: Բուշի մեջ արթնանում է նախնադարյան ուժը…

Այդ պահին հրաշք է կատարվում: Ափին հայտնվում է մի ծերացող կին: Այսինքն այն որսը, որի շունչը Բուշը զգում էր հսկայական հեռավորությունից:

Կինը բարեկազմ է լինում ու չքնաղ: Նրա գլխավերեւում թեւածում են թիթեռնիկները: Երկնագույն օդեղեն զգեստը քսվում է խոտին: Ձեռքին գիրք է: Աղոթարանի պես կրծքին սեղմած:

Սրատես Բուշը հեշտությամբ կարդում է վերնագիրը՝ Ախմատովա: Բանաստեղծություններ:

Դուրս է թքում բերանի խոտն ու հզոր, խուլ բարիտոնով արտասանում .

Դեռ թեւածում են նրանք, դեռ ճանապարհին են
Խոսքերը սիրո եւ ձերբազատման,
Իսկ ինձ արդեն տագնապն է համակել աստվածային,
Շուրթերս պաղ են սառույցի նման:

Կինը դանդաղեցնում է քայլերը: Ձեռքերը սեղմում է քունքերին: Գիրքը, բացվելով, ընկնում է: Բուշը շարունակում է .

Իսկ հետո՝ անտանելի շռայլ մի լույս,
Ասես քաղցր ու տաք գինի…
Մոխրացած է արդեն գիտակցությունս
Շիկացած քամուց արբունքի…

Կինը լուռ է: Դեմքին շփոթ է ու սարսափ: (Եթե սարսափը կարող է դրսեւորվել որպես կրքոտ ու ուրախալի զգացմունք): Խոնարհելով հայացքը, կինը հազիվ լսելի շարունակում է .

Շուտով, սակայն, այնտեղ ուր կեչիները
Խշշում են խուլ հենված պատուհանիս,
Ալ պսակներ են հյուսելու վարդերը,
Անտես շշուկներ են հնչելու ունկիս…

(Նա ասում է «վաղդեղը»): Բուշը ելնում է տեղից:

Դուք սիրո՞ւմ եք Ախմատովային:

Ես նրա բոլոր բանաստեղծություններն անգիր գիտեմ, պատասխանում է կինը:

Ինչպիսի զուգադիպություն: Ես նույնպես… Իսկ ծաղիկնե՞ր: Դուք ծաղիկներ սիրո՞ւմ եք:

Դա իմ թուլությունն է… Իսկ թռչուններ: Ի՞նչ կասեք թռչունների մասին:

Բուշը նայում է կարապների կողմը, մի պահ լռում է ու ասում .

Ճայն է ճախրում ամպերում ալ,
Թե շիկահավերն են ճռվողում…
Տիրուհիս, կուզեմ թռչնակ դառնալ
Ու կտցել հատիկը քո ափերում…

Դուք բանաստեղծ եք, հարցնում է կինը:

Գրում եմ երբեմն տողերի արանքում, ամոթխած պատասխանում է Բուշը…

Օրը պաղում է:
Մորենիների ստվերները ձգվում են:
Ջուրը կորցնում է փայլը:
Թփերում արդեն թափառում է աղջամուղջը:

Սուղճ ուզո՞ւմ եք, առաջարկում է կինը: Տունս մոտիկ է:

Ներեցեք, ասում է Բուշը, իսկ երշիկ չունե՞ք: Ի պատասխան՝

Ունեմ այն ամենն, ինչ պետք է միայնակ սղտին…

Բուշի ու Գալինայի հետ ապրեցի երեք շաբաթ: Տարօրինակ, խելագարությամբ լի օրեր էին:

Օրը բացվում էր մեղմ, հուզիչ երգեցողությանբ: Գալինան տղայական տենորով երգում էր .

Հոգնել ու դադղել եմ ես
Գիշեղ, թե ցեղեկ մտքիս դու ես…

Նրա սիրեցյալն արձագանքում էր ցածր, խռպոտ բարիտոնով .

Հյուսիսային Դվինայում թե խեղդվեմ,
Կամ ուրիշ տեղ գտնեմ վախճան,
Երկիրը ինձ չի սգալու, գիտեմ,
Ընկերներս են լալու անդավաճան…

Պատահում էր, որ առավոտյան պարում էին խոհանուցում: Պարելիս յուրաքանչյուրը մի մեղեդի էր երգում: Թեյի սեղանին Գալինան հայտարարում էր .

Այսօր ինձ անվանեք Վեղոչկա: Իսկ վաղվանից՝ Հազաղան Բլբուլ…

Ցերեկները հաճախ էր խոսում հեռախոսով: Պատահական համարներ էր հավաքում: Երբ պատասխանում էին, քնքշորեն ասում էր .

Այսօր ձեզ հաճելի անակնկալ է սպասում: Կամ .

Զգուշացեք բալի հատիկով զաղդաղված գլխաղկով տիկնոջից:

Հավելումն՝ Գալինան ժամերով վարժեցնում էր թափանցիկ, սրընթաց սուսերակիր ձկնիկին: Շշնջում էր ակվարիումի վրա խոնարհված .

Չաղություն մի աղա, Զիմ: Մայդիկին ձեղքող աղա…

Եվ վերջապես, Գալինան գուշակ էր: Ինձ, օրինակ, ինչ-որ գունավոր հուլունքների երկար նայելուց հետո, ասաց .

Կյանքդ ավաղտելու ես Բղազիլիայում կամ նման մի տեղում:

(Այն ժամանակ՝ յոթանասունհինգ թվականին, ծիծաղեցի: Այսօր գրեթե համոզված եմ, որ այդպես էլ լինելու է:)

Բուշը ամբողջ օրը ետուառաջ էր անում կանաչ խալաթով, որ Գալինան կարել էր վարագույրից: Նա պատրաստում էր Նոբելյան մրցանակի շնորհման արարողությանն իր արտասանելիք շնորհակալական ճառը: Ճառը սկսվում էր այսպես .

«Տիկնայք եւ պարոնայք: Շնորհակալ եմ պատվի համար: Ինչպես ասում են՝ լավ է ուշ, քան երբեք…»:

Այդպես էլ ապրում էինք: Իմ տասնվեց ռուբլին արագորեն վերջացավ: Գալինայի թոշակը բավականացնում էր մի ութ օր: Հարկավոր էր աշխատանք որոնել:

Եվ հանկարծ աչքիս ընկավ մի հայտարարություն . «Շտապ պահանջվում են հնոցապաններ»:

Ասացի Բուշին: Կարծում էի, թե կհրաժարվի: Բուշը, սակայն, համաձայնեց եւ անգամ պայծառացավ:

Հանճարեղ է, ասաց, սա հենց այն է, ինչը մեզ համար պարտադիր է: Վաղուց էր պետք ապրել ժողովրդական զանգվածների կյանքով: Սնվել, այսպես ասած, ակունքներից: Մոտենանք բնությանը, ծերուկ: Մոտենանք պարզ, մարդկային ուրախություններին: Մոտենանք բնական ամբողջական անձնավորություններին: Կորչի՛ մետաֆիզիկան եւ ամենայն տրանսցենդենտալությունը: Կեցցեն մուրճն ու զնդանը:

Գալինան երկչոտ առարկեց.

Է՛ղինկա, դու թույլ ես:

Բուշը աչքերը ոլորեց կնոջ վրա, եւ վերջինս լռեց…

Կաթսայանոցը մի մռայլ ցածր շինություն էր հսկայական խողովակի ստորոտին: Մուտքի մոտ ածուխի մեծ կույտ էր: Կողքին՝ բահեր ու երկու դատարկ սայլակ:

Ներսում համաչափ ոռնում էին երեք կաթսա: Մեկի մոտ մի երիտասարդ էր կանգնած: Ձեռքին ծանր կրակխառնիչ: Հրակալներից վեր վարդագույն բոց էր խփում: Երիտասարդը կնճռոտում ու շրջում էր դեմքը:

Ողջույն, ասաց Բուշը:

Բարեւ, պատասանեց հնոցապանը, նորեկնե՞ր եք:

Հայտարարությամբ ենք եկել:

Ուրախ եմ: Անունս Օլեգ է: Ասացինք մեր անունները:

Մտեք դիսպետչերանոց, ասաց Օլեգը, ներկայացեք Ցարիկովին:

Մետաղե դռնով փոքրիկ տաղավարում կաթսաների ոռնոցն ավելի խուլ էր: Քրքրված սեղանին ինչ-որ գրաֆիկներ ու ամփոփագրեր էին: Պատից կախված էր էժանագին բարձրախոս: Նեղ թախտի վրա պառկած էր զինվորական հագուստով մեկը՝ դեմքը լրագրով ծածկած: Մյուսը՝ ժոկեյի գլխարկով, սեղանի մոտ նստած աշխատում էր: Տեսնելով մեզ, բարձրացրեց գլուխը:

Նորեկնե՞ր եք:

Հետո ելավ ու մեկնեց ձեռքը .

Տուրիկով, գլխավոր դիսպետչեր: Նստեք:

Նկատեցի, որ նախկին զինվորն արթնացել է: Խշշոցով մի կողմ դրեց թերթը:

Խուդ, ներկայացավ:

Մարդիկ են պետք, ասաց դիսպետչերը: Աշխատանքը բարդ չէ: Գնանք բացատրեմ:

Իջանք երերուն աստիճաններով: Խուդը գալիս էր մեր ետեւից: Օլեգը մեզ ձեռքով արեց՝ որպես վաղեմի ծանոթների:

Կանգնեցինք ձախ կաթսայի մոտ: Այնքան մոտիկ, որ դեմքով զգում էի հուրը:

Սարքը, ասաց Ցուրիկովը, չափազանց պարզ է: Հնոց, հրակալներ, օդամղիչ… Ելքի ջերմաստիճանը պետք է լինի յոթանասուն աստիճան, ետ գալիս՝ քառասունհինգ: Հերթափոխի սկզբում ապահովում եք ածուխը: Սայլակները լրիվ բեռնել խորհուրդ չեմ տալիս, շուռ կգան… Գնալուց առաջ հարկավոր է մաքրել հրակալները, հեռացնել շլակը… Այսքանը, թերեւս: Գրաֆիկը նույնչափ պարզ է . մեկ օր աշխատում ենք, երեք օր հանգստանում ենք: Վճարումը գործարքային: Կարելի է հանգիստ ամսական հարյուր հիսուն ռուբլի վաստակել…

Ցուրիկովը մեզ տարավ տղաների մոտ ու ասաց .

Հուսով եմ, իրար հետ լեզու կգտնեք: Թեեւ մերոնք բավական տարօրինակ մարդիկ են: Օլեժկան, օրինակ, բուդդիստ է: «Ձեն» դպրոցի հետեւորդ: Հանգստություն է որոնում սեփական հոգու վանքում… Խուդը գեղանկարիչ է՝ համաշխարհային ավանգարդի ձախթեւային: Աշխատում է մետաֆիզիկական սինթետիզմի ավանդույթներով: Նկարում է հիմնականում արկղեր, տակառներ, տուփեր…

Շարքը կոչվում է «Մեռյալ ճշմարտություններ», շշուկով բացատրեց Խուդը՝ շփոթված շիկնելով:

Ցուրիկովը շարունակեց .

Դե, իսկ ես սովորական մարդ եմ: Ազատ ժամերին զբաղվում եմ երաժշտության տեսությամբ: Ի դեպ, ի՞նչ եք մտածում Բրիտտենի ստեղծագործություններում կիսատոնային վրադրումների մասին:

Բուշը մինչեւ այս պահը լուռ էր: Այստեղ, սակայն, նրա դեմքը անսպասելիորեն այլայլվեց: Հատու ու կարճ ասաց .

Գնացինք այստեղից:

Ցարիկովն ու իր գործընկերները շփոթված հայացքներով ուղեկցում էին մեզ:

Դուրս ելանք փողոց: Բուշը պայթեց վրդովված մենախոսությամբ .

Սա կաթսայատուն չէ: Սա, հազար ներողություն, ինչ-որ Սորբոննա է… Ես երազում էի ընկղմվել ժողովրդական կյանքի մեջ: Ամրանալ բարոյապես եւ ֆիզիկապես: Սնվել կենսատու ակունքներից… Եվ ի՞նչ: Ինչ-որ ձենբուդդիստներ ու մետաֆիզիկներ, պոռնկական կիսատոնային վրադրումներ: Մի խոսքով՝ տուն ենք գնում…

Ի՞նչ կարող էի անել:

Գալինան մեզ դիմավորեց ուրախության բացականչություններով:

Այնպես էի լալիս, ասաց, այնպես էի լալիս: Այնպես էի ձեզ խղճում…

Երեք օր էլ անցավ: Գալինան մի քանի գիրք վաճառեց բուկինիստական խանութին: Ես եղա Տալլինի բոլոր խմբագրություններում: Պայմանավորվեցի արտահաստիքային աշխատանքի վերաբերալ: Հարցազրույց վերցրի ինչ-որ փականագործից: Ռեպորտաժ գրեցի արդյունաբերական ցուցահանդեսից: Ապագա հոնորարների հաշվին պարտքով քսան ռուբլի վերցրի Շաբլինսկուց:

Կիսաքաղց մահը նահանջեց:

Ավելին, ես հաջողություն ունեի: Եթե Լենինգրադում շարքային լրագրող էի համարվում, այստեղ՝ գրեթե ռահվիրա էի: Ինձ ավելի ու ավելի պատասխանատու հանձնարարություններ էին տալիս: Գրում էի լույս տեսած գրքերի ու թատերական նորույթների մասին, վարում էի ամենօրյա «Այլ կարծիք» խորագիրը, վերջապես ֆելիետոններ էի գրում: Իսկ ֆելիետոնն, ինչպես հայտնի է, ամենապահանջված ժանրն է թերթում: Կարճ ասած, արագորեն վեր էի բարձրանում:

Ինձ սկսեցին հրավիրել խմբագրական թռուցքաժողովներին: Իսկ մեկ ամիս էլ անց՝ կոլեկտիվի ընկերական քեֆերին: Իմ հրապարակումների մասին խոսում էին Էստոնիայի Կենտկոմում:

Այդ ժամանակ արդեն վաղուց Բուշի ու Գալինայի մոտ չէի ապրում: Խմբագրությունը ինձ սենյակ էր հատկացրել Տոմպի փողոցում՝ աննախադեպ արտոնություն արտահաստիքային աշխատակցի համար: Դա նշանակում էր, որ մտադիր են մոտ ապագայում ինձ հաստիքային աշխատանք տալ: Իրոք, մեկ ամիս անց հրամանագրեցին որպես հաստիքային աշխատող:

Խմբագիրն ինձ ասում էր .

Դուք ցնցող հումորի զգացում ունեք: Ձեր ասույթներից շատերն անգիր եմ հիշում: Օրինակ սա . «Երբ անվախը լռում է, վախկոտը սկվում է…»: Ձեր ֆելիետոնները պատմում եմ տնային աշխատողիս: Նա, իմիջիայլոց, գերմանական գիմնազիա է ավարտել:

Հիմա, ասացի, հասկանամ եմ, թե որտեղից է գալիս ձեր անթերի շարժուձեւը:

Խմբագիրը չէր վիրավորվում: Նա ազատական մտածողության տեր մտավորական էր: Ամբողջ իրավիճակն այն ժամանակ ազատական էր: Մերձբալթիկայում՝ հատկապես:

Վաստակում էի այժմ ամսեկան առնվազն երկու հարյուր հիսուն ռուբլի: Հաջողացնում էի անգամ ալիմենտ վճարել:

Հայտնված ընկերներս էլ համապատասխան էին . երիտասարդ գրողներ, նկարիչներ, գիտնականներ, բժիշկներ: Լիարժեք, լավ վաստակող մարդիկ: Լինում էին ռեստորաններում ու թատրոններում, կղզիներ էին գնում: Կարճ ասած՝ ապրում էինք ստեղծագործական մտավորականության համար նորմալ կյանքով:

Բուշը չէր նախանձում իմ հաջողությանը: Հակառակը, ուրախ կրկնում էր . «Գործիր, ծերուկ: Մեր մարդիկ պետք է առանցքային պաշտոններ գրավեն պետության մեջ»:

Պարտքով փող էի տալիս Բուշին: Մի քսան անգամ նրա փոխարեն վճարել եմ Մյանդի-բարում: Այսինքն, ինձ պահում էի ինչպես հարկն է: Ուրիշ ի՞նչ կարող էի անել: Հո պաշտոնս իրեն չէ՞ի զիջելու:

Երդվում եմ, Բուշին հանդիպելուց չէի խուսափում: Պարզապես հիմա մենք պատկանում էինք տարբեր սոցիալական խմբերի:

Ես պնդեցի, որ Բուշին կրկին օգտագործեն որպես արտահաստիքային աշխատող: Անկեղծ ասած, հարկ եղավ նշանակալի դիմադրություն հաղթահարել: Կապիտան Ռուդիի պատմությանը դեռ չէր մոռացվել:

Բուշին, հասկանալի է, քաղաքական երանգ ունեցող նյութեր այլևս չէին վստահում: Նա գրում էր կենցաղային, մշակութային, մարզական տեղեկատվության: Թռուցկաժողովներին աշխատում էի գովել նրա ամեն մի հրապարակումը: Նա սկսել էր ավելի հաճախ երևալ խմբագրության միջանցքներում:

Նա այդ ժամանակ արդեն բավական խամրել էր: Տաբատը փայլում էր ծնկներին: Բաճկոնն ակնհայտորեն մաքրման կարիք ուներ: Ծերացող կանայք, սակայն (իսկ այդպիսիք կան բոլոր խմբագրություններում), շարունակում էին Բուշին տեսնելիս տանջահար շիկնել: Ուրեմն նրա առավելությունը ներքին էր, ոչ թե արտաքին:

Հիշում եմ, խմբագրությունում նշվում էր մեքենագրական բյուրոյի վարիչ Լորեյդա Ֆիլիպովնա Կոժիչի վաթսունամյակը: Բուշը նրան նվիրեց հրաշալի փոքրիկ ոտանավոր .

Սիրտս տրոփում է, երբ տեսնում եմ Լորեյդային,
Ի՞նչ է նշանակում դա ըստ Ֆրեյդի:

Մեկ շաբաթ Լորեյդան պայծառ ու գունատ էր՝ միաժամանակ: Նոմենկլատուրային աշխատողները մի ուշագրավ հատկանիշ ունեն: Նրանք հիշաչար չեն թեկուզ այն պատճառով, որ ծույլ են: Վրեժխնդրաթյան եռանդի համար ուժները չի հերիքում: Ճշմարիտ չարության համար նրանց պակասում է ճշմարիտ խանդավառությանը: Բարեկեցության երկար տարիների ընթացքում նրանց զգացմունքները բթանամ են մինչեւ մեծահոգության: Նրանց մտքերն այնքան անկյանք են, որ դա երբեմն նմանվում է բարության:

«Սովետսկայա Էստոնիայի» խմբագիրը բարեհոգի մարդ էր: Մինչեւ այն պահը, անշուշտ, երբ դառնում էր կոշտ ու չար: Քանի դեռ հարկադրված չէր լինում հետեւել համապատասխան ցուցումների: Հայտնի է, որ կարգին ու օրինավոր է համարվում այն մարդը, ով ստորություն անելուց հաճույք չի ստանում:

Կարճ ասած՝ Բուշին թույլատրեց տպագրվել: Սկզբնական շրջանում նրա թղթակցությունները խմբագրվում էին առանձնահատուկ զգոնությամբ: Աստիճանաբար դրանք դառնում էին ավելի ծավալուն եւ նշանակալի: Բուշի որոշ ակնարկներ փոքրիկ սենսացիաներ առաջացրին:

Դեկտեմբերին խմբագիրը կրկին սկսեց խոսել Բուշին հաստիքային տեղ տրամադրելու մասին: Հավելումն՝ Բուշի համար բարեխոսում էին տեղկոմի բոլոր ծերացող կանայք: Շաբլինսկին ու ես էլ պաշտպանում էինք նրան: Թռացկաժողովներից մեկին ասացի . «Անհրաժեշտ է լիարժեքորեն օգտագործել Բուշին: Այլապես նրան կմղենք դեպի դիսիդենտության սայթաքուն ուղին»:

Բուշին աշխատանքի տեղավորելը ստացել էր գաղափարական միջոցառման բնույթ: Գլխավոր խմբագիրը բազմանշանակ ժպիտով էր նայում նրան: Նրա ճակատագիրը կարող էր վճռվել արդեն տեսանելի ապագայում:

Մոտենամ էր Նոր տարին: Խմբագրությունում նշելու էինք: Ինչպես միշտ նկատելիորեն ակտիվացել էին անկյալները: Գրաշարներից երկուսը (երկուսն էլ հարբեցող) գնացին օղի բերելու: Նամակների բաժնի հաստահետույք աղջիկները բուտերբրոդներ էին պատրաստում:

Աշխատանքն այդ օրը շուտ ավարտեցինք: Արտահաստիքային հեղինակներին խնդրել էին չգնալ: Խնբագիրը կանչել էր Բուշին ու ասել .

Հուսով եմ, երեկոյան կհանդիպենք: Ուզում եմ հաճելի նորություն հայտնել ձեզ:

Աշխատակիցները դեգերում էին միջանցքներում: Ամենաանհամբերները փակվել էին կենցաղի բաժնում: Դռան ետեւից բաժակների զրնգոց էր լսվում:

Մի քանիսը գնացել էին տուն՝ տոնական զգեստներ հագնելու: Վեցի կողմերը վերադարձան: Բուշը հագել էր ծխախոտագույն արտասահմանյան կոստյում: Լաքապատ կոշիկները փայլում էին:

Հիանալի տեսք ունես, ասացի: Բուշը շփոթված ժպտաց .

Գալինան երեկ ատամները ծախեց: Երկու պլատինե շապիկ տարավ ոսկեգործին: Եվ ինձ համար այս հագուկապն առավ: Այսքանից հետո կարո՞ղ եմ լքել նրան…

Տեղավորվեցինք քարտուղարության մեծ սենյակում: Բոլորը բարձրաձայն զրուցում էին, ծխում, ծիծաղում:

Խմբագրական քեֆերին, առհասարակ, ժողովրդավարության մթնոլորտ է տիրում: Կարելի կատակել գլխավոր խմբագրի հետ: Որոշել, թե ով է դարաշրջանի ամենահանճարեղ լրագրողը: Արտասանել անչափ հաճոյախոսություններ: Կարելի է, օրինակ, լսել .

Ծերուկ, դու հսկա ես: Դու լուսանկարչական ռեպորտաժի Պագանինին ես:

Իսկ դու, սովորաբար լինում է պատասխանը, տնտեսական առաջնորդողի Շեքսպիրն ես…

Այստեղ են հանգուցալուծվում ընթացիկ սիրային կոնֆլիկտները: Խարդավանքներ են հյուսվում: Առաջադրվում են Պատվո տախտակի թեկնածուներ:

Այլ կերպ ասած՝ ամենօրյա խմբագրական խառնաշփոթն այստեղ նորմա է դառնում: Վերջնականապես հաստատվում է խմբագրությանը բնորոշ լարված, տենդագին չբերության մթնոլորտը…

Բուշն իրեն պահում էր ծայր աստիճան գոռոզ ու խիստ: Նստել էր լուսամատի մոտ: Խորասուզված կարդում էր: Գիրքը կոչվում էր «Ուղղագրության եւ կետադրության խրթին դեպքերը»:

Վերջապես սեղան նստեցինք: Խմբագիրը սպասելով, որ բոլորը լռեն, ասաց .

Բարեկամներս: Ահա աշխատանքով հագեցած մեկ տարի էլ անցավ: Մենք հիշելու բան ունենք: Ե՛վ ուրախություններ են եղել, եւ՛ տխրություններ: Ե՛վ ձեռքբերումներ, եւ՛ անհաջողություններ: Մեր հրապարակումներում ավելացել են լուրջ, վառ ու խորը նյութերը: Պակասել են բացթողումներն ու սխալները: Համոզված եմ, որ եկող տարի ավելի համերաշխ ու համախումբ ենք աշխատելու… Այսօր ինձ զանգեցին Կենտրոնական կոմիտեից: Իվան Գուստավովիչ Կեբինը իր շնորհավորանքն է հղում ձեզ: Թույլ տվեք ի սրտե միանալ դրան: Շնորհավո՛ր Նոր տարի, բարեկամներս . . .

Հետո բազմաթիվ այլ կենացներ եղան: Գլխավոր խմբագրի եւ պատասխանատու քարտուղարի, համեստ աշխատավորներ սրբագրիչների ու մեքենագրուհիների: Խմեցինք արտահաստիքային թղթակիցների ու ակտիվ բանվորական թղթակիցների եենացը: Ինչ-որ մեկը խոսեց քաղաքական զգոնության մասին: Եղավ ֆուտբոլի թիմ ստեղծելու առաջարկ: Խմբագրության «ստուկաչ» Իգոր Գասպլը միասնաբար աշխատելու կոչ արեց: Շաբլինսկին առաջարկեց խմել հմայիչ կանանց կենացը…

Սենյակը լցվել էր ծխով: Մարդիկ բաժակները ձեռքներին բաժանվել էին առանձին խմբերի: Ուտելիքն արագորեն չքանում էր:

Կենցաղի բաժնի Տորշինան համոզում էր, որ բոլորս միասին երգենք: Ֆիմա Բիկովերը պարտքերն էր բաժանում:

Շուտով հայտնվեց հավաքարար Հիլդան: Հարկավոր էր ցրվել:

Եվս տասը րոպե, ասաց խմբագիրն ու շամպայնի բաժակն անձամբ մեկնեց Հիլդային:

Դռան մեջ հայտնվեց խմբագրի տիկինը՝ Զոյա Սեմյոնովնան: Նա զգուշությամբ բերում էր մի հսկայական մելքիորե սկուտեղ՝ սուրճով լի գավաթներով:

Մինչեւ այդ պահը Բուշն անշարժ նստած էր: Բաժակը դրել էր ռադիոլայի կափարիչի վրա: Գիրքը ծնկներին էր:

Իսկ հիմա բարձրացավ տեղից: Լայն ժպիտով մոտեցավ Զոյա Սեմյոնովնային: Անսպասելիորեն ինչ-որ ֆուտբոլային շարժում արեց: Ու լաքապատ կոշիկի հզոր հարվածով վայր գցեց սկուտեղն ապշած կնոջ ձեռքից:

Սենյակն իրար անցավ: Ճչում էին նրանք, ում վրա թափվել էր եռման սուրճը: Լյուբա Տորշինան ուշագնաց եղավ…

Չորս արտահաստիքային աշխատողներ բռնեցին Բուշին: Բուշը չէր դիմադրում: Երջանիկ ժպիտը սառել էր դեմքին:

Միլիցիա էին զանգում, «Շտապ օգնություն»…

Երեք օր անց Բուշին զննեց հոգեբուժական հանձնաժողովը: Նրան միանգամայն մեղսունակ ճանաչեց: Բուշին դատապարտեցին որպես խուլիգանի: Տվին երկու տարի՝ պայմանական:

Լավ է, որ խմբագիրը չկամեցավ հասնել ավելի խիստ պատժի: Բուշը հեշտ պրծավ, լրագրության մասին, սակայն, մտածելն իսկ արդեն ծիծաղելի էր…

Մոտ մեկ ամիս Բուշին կորցրի տեսադաշտիցս: Գնացել էի Լենինգրադ՝ ընտանեկան գործերս կարգավորելու: Վերադարձիս զանգեցի, բայց նրա

հեռախոսը չէր աշխատում:

Բուշին չէի մոռացել: Հուսով էի, որ քաղաքում կտեսնեմ: Այդպես էլ եղավ:

Բուշը կանգնած էր լուսանկարչատան ցուցափեղկի մոտ ու նայում էր ժպտացող հրեշներին: Ձեռքի ֆրանսիական բուլկու կեսն արդեն կերել էր: Ամբողջ տեսքը վկայում էր, որ բացարձակապես պարապ է:

Ես առաջարկեցի մտնել «Կունգլա» բարը: Բուշն ասաց .

Այնտեղ պարտք եմ:

Շա՞տ:

Վեց ռուբլի:

Լավ է, ասում եմ, համ էլ պատքը կտանք: Վերարկուները հանեցինք, բարձրացանք երկրորդ հարկ, նստեցինք պատուհանի մոտ:

Ես ուզում էի իմանալ, թե ինչ էր պատահել: Հանուն ինչի՞ նա կատարեց այդ անհեթեթ արարքը: Նյարդային ցնցո՞ւմ էր, գիտակցության մթագնո՞ւմ:

Բուշն ինքը խոսք բացեց .

Հասկացիր, ծերուկ: Խմբագրությունում բոլորը բորենիներ են… Անմիջապես ճշտեց .

Բացի քեզանից, Շաբլինսկուց եւ չորս դժբախտ պառավներից… Մի խոսքով, խոզերը գերակշռում են: Եվ այդ հիմար քեֆը: Իսկ ես նստած սպասում եմ, թե երբ է այդ թանձրահետույք խմբագիրն ինձ երջանկացնելու իր բարերարությամբ: Ու հայտնվում է ծուռթաթ Զոյկան իր սկուտեղով: Բոլորը միայն մի ցանկություն ունեն՝ քացով խփել-ջարդել այդ բոզական սկուտեղը: Այդտեղ հասկացա, որ հասել է պատասխանատու պահը: Վճռվելու է, թե ով եմ ես: Ասպե՞տ, ինչպես համարում է Գալկան, թե՞ քաք, ինչպես պնդում են մնացածները: Ես էլ ելա ու…

Բարում նստեցինք մոտ մեկ ժամ: Ես պետք է խմբագրություն գնայի: Ինչ-որ առաջադեմ ֆրանսիացու հետ հարցազրույց պիտի անեի:

Հարցրի .

Ինչպե՞ս է Գալինան:

Ոչինչ, ասաց Բուշը, վիրահատություն տարավ… Ինչ-որ կանացի բաներ…

Դրանից հետո հազվադեպ էինք հանդիպում: Խիստ զբաղված էի խմբագրությունում: Պատմվածքներիս ժողովածուն էի նախապատրաստում տպագրության:

Մի անգամ Բուշին հանդիպեցի ձիարշավարանում: Հատակին հասած մարդու տեսք ուներ: Մի քիչ փող տվեցի: Շնորհակալություն հայտնեց ու անմիջապես գնաց խմիչք բերելու:

Չսպասեցի...

Ամռանն ինձ ուղարկեցին Բուլղարիա՝ կինոփառատոնը լուսաբանելու: Դա իմ առաջին արտասահմանյան գործուղումն էր: Այսինքն՝ իմ նկատմամբ քաղաքական վստահության նշան, եւ իմ լոյալության վկայություն:

Վերադարձիս ապշեցուցիչ պատմություն լսեցի:

Տալլինամ տոնում են Նոյեմբերի 7-ը: Շքերթավորների շարասյուները ձգվում են դեպի քաղաքի կենտրոնը: Կառավարական տրիբունան Կենտրոնական կոմիտեի շենքի առջեւ է: Երաժշտություն է հնչում: Օդում գույնզգույն փուչիկներ: Հաղորդավարը ռադիոյով անվերջ շնորհավորանքներ ու կեցցեներ է հռչակում:

Մարդկանց ձեռքերում տրանսպարանտներ են ու առաջնորդների դիմանկարներ: Միլիցիոներները հետեւում են կարգուկանոնին: Բոլորը բարձր տրամադրության մեջ են: Ինչ էլ լինի, տոն է:

Շքերթավորների մեջ է նաեւ Բուշը: Ավելին բռնել է փայտին ամրացված ֆաներայի մի կտոր: Նման է ձյուն մաքրելու բահի: Ֆաներային կանաչ ներկով գրված է .

«Վճռական հակահարված տանք համաշխարհային իմպերիալիզմի թշնամիներին»:

Այս պլակատով Բուշը Կադրիորգից հասել էր մինչեւ դաշնամուրի գործարան: Այստեղ միայն միլիցիոներները իրար էին անցել: Ովքե՞ր են «համաշխարհային իմպերիալիզմի թշնամիները»: Այդ ո՞ւմ «վճռական հակահարված» տանք…

Բուշը չի դիմադրում: Նրան փակ ավտոմեքենայով տանում են Պագարի փողոց: Երեք րոպե անց նրան հարցաքննում է անձամբ գեներալ Պորկը:

Հարցերին Բուշը պատասխանում է հանգիստ ա հակիրճ: Իր մեղքը կտրականապես չի ընդունում: Ասում է, թե պատահածը թյուրիմացության է, անուշադրաթյան հետեւանքով սպրդած սխալ:

Գեներալը Բուշի հետ զրուցում է մեկակես ժամ: Երբեմն շատ կիրթ, երբեմն՝ անակնկալ կոպիտ: Բուշին մեկ դիմում է «Էռնեստ Լեոպոլդովիչ»–ով, մեկ էլ վրան գոռում . «Կգնդակահարեմ, շո՛ւն»:

Ի վերջո, Բուշը ձանձրանում է արդարանալուց: Թուղթ ու մատիտ է խնդրում: Թեթեւացած գեներալը նրան է մեկնում ինքնահոսը .

Անկեղծ խոստովանությանը կարող է մեղմացնել ձեր ճակատագիրը…

Բուշը որոշ ժամանակ լուսամուտից դուրս է նայում: Հետո ժպտում է ու գեղեցիկ, թեք ձեռագրով շարադրում .

Հայտարարություն:

Այնուհետեւ .

1 . Խորը մտահոգություն եմ հայտնում Մերձբալթիկայի եւ Անդրկովկասի քրիստոնյա-մկրտականների ճակատագրի նկատմամբ:

2 . Ամերիկյան մտավորականությանը կոչ եմ անում անմիջապես արձագանքել Կրեմլի չարաշահումներին մարդու ազատությունների ոլորտում:

3 . Պահանջում եմ իմ պատմական հայրենիքը՝ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն, անխոչընդոտ արտագաղթելու իմ իրավունքը:

Ստորագություն՝ Էռնեստ Բուշ, խղճի կալանավոր:

Գեներալը կարդում է հայտարարությունն ու զցում աղբարկղը: Նա որոշում է կիրառել հին ու փորձված մեթոդը: Պարզապես լուռ հեռանում է:

Այս մեթոդը, որպես կանոն, միշտ արդյունավետ է գործում: Մնալով դատարկ սենյակում, հարցաքննվողների նյարդերը սովորաբար չեն դիմանում: Անորոշությունն ավելի է վախեցնում նրանց, քան ցանկացած սպառնալիք: Նրանք սկսում են վերլուծել սեփական վարքը: Սկսում են տենդագին որոնել փրկարար քայլեր: Շփոթվում են անիմաստ հնարքների բազմազանությունից: Տանջալի սպասումը մարդկանց վերածում է վախից դողացող անասունի: Գեներալն այդ հույսով է Բուշին մենակ թողնում:

Վերադառնում է քառասուն րոպեից: Տեսածն ապշեցնում է նրան: Բուշը խաղաղ քնած է լինում՝ գլուխն արձանագրությունների թղթապանակին:

Ավելի ուշ գեներալը պատմել է .

Իմ կաբինետում ինչ ասես, որ չի եղել: Մարդիկ սեփական երակներն են բացել: Մոխրամանում նոթատետրեր են վառել:

Փորձել են լուսամատից դուրս թռչել: Քնելը, սակայն, առաջին դեպքս էր–

Բուշին տանում են հոգեբուժական կլինիկա: Կատարվածը գեներալին ներկայանում է որպես հոգեկան հիվանդության բացահայտ ախտանիշ: Հնարավոր է, որ նա այնքան էլ չէր սխալվում:

Բաց են թողնում Բուշին միայն կես տարի անց: Այդ ընթացքում իմ կյանքում փոփոխություններ եղան:

Դժվարանում եմ հիշել, թե ինչից սկսվեց: Մի քանի անգամ ավելորդ բաներ ասացի: Կռվեցի համապատասխան մարմինները ներկայացնող Գասպլի հետ: Մի անգամ հարբած մտա Կենտկոմ: Էստոնիայի գրողների կոնֆերանսում առարկեցի անձամբ ընկեր Լիպպոյին…

Հիշեցին, որ աշխատում եմ առանց Տալլինի գրանցման: Պարզեցին իմ մասնակի հրեական ծագումը: Բուշի հետ կապերն էլ դրական ազդեցություն չունեցան հեղինակությանս վրա:

Հենց այդ ժամանակ Էստոնիայում քաղաքական անկարգություններ սկսվեցին: Մի խումբ դիսիդենտներ խնդրագրով դիմեցին Վալդհայմին: Երեք օրից նրանց հուշագիրը հաղորդվեց արեւմտյան ռադիոյով: Մեկ շաբաթ էլ անց Մոսկվայից ցուցում ստացվեց՝ ուժեղացնել դաստիարակչական աշխատանքը: Դա նշանակում էր, որ ինչ-որ մարդկանց հարկավոր է վոնդել, ստորացնել, պաշտոնանկ անել: Այդ ամենը, բնականաբար, հուշագրի հեղինակների նկատմամբ հետաքննությունից զատ:

Խմբագրության տնտեսվար Մելեշկոն ասում էր .

Կարող էին դիմել սեփական ղեկավարությանը: Թե չէ հնարել ինչ-որ Խաիմ…

Ճնշումների համար ես հարմար թեկնածու էի: Եվ ինձ հեռացրին: Միաժամանակ տպարանում ոչնչացվեց պատմվածքներիս գրեթե պատրաստ ժողովածուն: Եվ այդ ամենը միայն Կրեմլի բոսսերին զեկուցելու համար՝ միջոցներ ձեռնարկվել են:

Ես, իհարկե, միակ զոհը չէի: Այդ օրերին փակվեց ձիարշավարանը՝ բուրժուական տրամադրությունների բույնը: Ժուռնալիստների միության բուֆետում արգելեցին ոգելից խմիչքի վաճառքը: Խանութներից չքացավ խոզապուխտը: Սա, թերեւս, արդեն ուրիշ թեմա է…

Մի խոսքով էստոնական ազատականությունը վերջացավ:

Ժողովրդի լավագույն մասը՝ երկու երիտասարդ գիտնական՝ անցավ ընդհատակ…

Ես զրկվեցի հաստիքային պաշտոնից: Առաջարկեցին հեռանալ «սեփական դիմումի համաձայն»: Խորհուրդ տվեցին կրկին դառնալ բանվորական թղթակից: Հրաժարվեցի:

Լենինգրադ վերադառնալու ժամանակն էր: Առավել եւս՝ ընտանեկան կյանքս սկսել էր կարգավորվել: Բաժանումը մարդկանց ավելի խելամիտ է դարձնում…

Կոմպի փողոցի բնակարանում իրերս էի հավաքում: Հեռախոսը զանգեց: Ճանաչեցի Բուշի ձայնը:

Ծերուկ, կսպասես ինձ: Գալիս եմ: Ոտքով: Փող բոլորովին չունեմ: Փոխարենը քեզ արժեքավոր նվեր եմ բերում…

Իշա գինի առնելու: Քառասուն րոպեից եկավ: Տեսքն ավելի լավ էր, քան վեց ամիս առաջ: Հարցրի .

Գործերդ ինչպե՞ս են:

Ոչինչ:

Բուշն ինձ պատմեց, որ իրեն հաշվառման մեջ են պահում հոգեբուժարանում: Հետն էլ պարբերաբար քարշ են տալիս ՊԱԿ: Քիչ անց աշխուժացավ ու, ձայնն իջեցնելով, ասաց .

Հուշանվեր եմ բերել քեզ:

Արձակեց բաճկոնի կոճակները: Ծոցից հանեց քառածալ մի թուղթ: Գոհ տեսքով մեկնեց ինձ:

Սա ի՞նչ է,: հարցրի:

Պատի թերթ:

Ի՞նչ պատի թերթ:

ՊԱԿ-ի տեղական բաժանմունքի: Տեսնում ես՝ «Վահան եւ սուր»: Լիքը հետաքրքիր բան կա: Ինչ-որ մեկին պարսավում են լակելու համար: Սպեկուլյանտների մասին հոդված կա: Իսկ սա բանաստեղծություն է խուլիգանների մասին .

Ստիլյագը շշով խփեց
Շքանշանակիր ծերուկին:
Աւեհեր կնճռոտ ծոծրակից
Արյուն է խփում, ինչպես աղբյուրից…

Իսկ ինչ, ասաց Բուշը, վատ չէ…

Հետո սկսեց պատմել, թե ինչպես է տիրացել պատի թերթին:

Կանչում է ինձ ցնդած Սորոկինը: Սկսում է իր տխմար խոսակցությունները: Իր բոլոր փաստարկները հերքում եմ Մարքսից մեջբերումներով: Սորոկինը հեռանում է: Ինձ մենակ է թողնում պեդեռաստի իր կաբինետում: Իսկ ես մտածում եմ, թե ինչ նվիրեմ Սերյոժային ի հիշատակ: Տեսնեմ պահարանի գլխին պատի թերթ է ընկած: Վերցրի, դրի ծոցս: Նվիրում եմ որպես հուշանվեր…

Արի, ասում եմ, վառենք: Շառից-փորձանքից հեռու:

Արի, համաձայնում է Բուշը: Պատառոտեցինք թերթն ու վառեցինք զուգարանում: Ուշանում էի: Տաքսի կանչեցի: Բուշը հետս եկավ կայարան: Կառամատույցին բռնեց ձեռքս .

Ի՞նչ կարող եմ անել քեզ համար: Ինչո՞վ կարող եմ օգնել:

Ամեն ինչ կարգին է:

Բուշը մի պահ մտքերի մեջ ընկավ ինչ-որ տանջալի որոշում ընդունելով:

Ուզում ես, ասաց, ամուսնացիր Գալինայի հետ: Ընկերաբար զիջում եմ: Նա կարող է ծաղիկներ նկարել ու նկարները վաճառել: Սի շաբաթից սիամի կատուն ձագեր է բերելու: Ամուսնացիր, չես փոշմանի:

Ես, ասում եմ, ճիշտն ասած, ամուսնացած եմ արդեն:

Դո՛ւ գիտես:

Գրկեցի նրան, հետո բարձրացա վագոն: Բուշը մնաց կառամատույցին կանգնած: Կարծես դեռ չեմ ասել, որ նա կարճահասակ էր…

Վեցերորդ տարին է, ինչ ապրում եմ Ամերիկայում: Կնոջս ու Կատյա դստերս հետ: Նոր ջինս գնելիս Կատյան մի քառասուն րոպե ոտքերով կոխոտում է: Հետո ծնկների վրա ծակեր է անում…

Վերջերս Բրուկլինում մեկը կանչեց ետեւիցս: Շուռ եկա ու ճանաչեցի Գրիշանյային: Նրան, որ մեզ Լենինգրադից Տալլին էր տարել իր մեքենայով:

Մտանք մոտակա ռեստորանը: Գրիշանյան պատմեց, որ այն ժամանակ նստել է ընդամենը վեց ամիս: Հաջողվել էր ինչ-որ մեկին կաշառել ու դուրս գալ:

Վերցնել գիտես՝ տալ էլ իմացիր, փիլիսոփայորեն ասաց Գրիշանյան:

Հարցրի, թե ինչպես է Բուշը: Ասաց .

Պատկերացում չունեմ: Շաբլինսկուն նշանակել են պատասխանատու քարտուղար…

Պայմանավորվեցինք, որ հեռախոսով կկապվենք: Այդպես էլ չզանգեցի: Ինքը նույնպես…

Մեկ ամիս առաջ թերթերում կարդացի կապիտան Ռուդիի մասին: Չորս տարի անցկացրել էր Մորդովիայում: Հետո նրա պաշտպանությամբ հանդես են եկել ինչ-որ կազմակերպություններ: Կապիտանին ժամանակից շուտ ազատ են արձակել: Հիմա ապրում է Համբուրգում:

Բուշի մասին հարցուփորձ եմ անում բոլորին, ով կարող է որեւէ բան իմանալ: Ըստ որոշ տեղեկությունների, Բուշը բանտում է: Կան նաեւ տեղեկություններ, թե ամուսնացել է ձկնարդյունաբերության նախարարի այրու հետ: Երկու տարբերակն էլ ճշմարտանման են: Եվ երկուսն էլ դառը զգացմունքներ են հարուցում:

Ո՞ւր է հիմա դիսիդենտ ու կանանց սիրելի, շիզոֆրենիկ, բանաստեղծ ու հերոս Էռնեստ Լեոպոլդովիչ Բուշը…